Արձանագրություն N 2

ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-17/2 ծածկագրով **<գնանշման հարցում>** գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 09 հոկտեմբերի 2017թ
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Նարեկ Ղազարյան

անդամներ՝, Արմինե Մարտիրոսյան, Ոսկի Ֆռանգուլյան, Մարիամ Ղազանչյան (բացող),

Նորայր Մանուկյան (բացող),

քարտուղար՝ Սևակ Պետրոսյան

I. Հայտերի բացման մասին

(Նարեկ Ղազարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) սահմանված ժամկետում հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	ՀՎՀՀ	Մասնակցի հետ կապի միջոցը
1	<Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ	**00873228**	info@flashmotors.am
2	<Մ-Բի-Ռ> ՍՊԸ	**08417829**	m-bi-r@mail.ru
3	<Տուրբոլայն> ՍՊԸ	**05205222**	tender-turboline@mail.ru

բ/ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել,

գ/ Մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացված են հավելվածում.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին

(Նարեկ Ղազարյան)

2. Ընդունել ի գիտություն, որ

ա/ **ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-17/**2 ծածկագրով ընթացակարգի մասնակիցներից <Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ-ի ներկայացրած հայտի փաստաթղթերը վավերացված են Անի Չերքեզյանի կողմից, ով լիազորված է <Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ-ի կողմից, սակայն լիազորագրի պատճեն կցված է N1 հավելվածին որպես մեկ փաստաթուղթ և այդ փաստաթուղթը էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված է Անի Չերքեզյանի կողմից:

բ/ **ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-17/2** ծածկագրով ընթացակարգի մասնակիցներից <Տուրբոլայն> ՍՊԸ-ի ներկայացրած հայտի փաստաթղթերը վավերացված են Հասմիկ Սամսոնյանի կողմից, իսկ ներկայացված փաստաթղթերում տնօրեն է նշված Ա.Գասպարյան, և հայտով ներկայացված փաստաթղթերում Հասմիկ Սամսոնյանի համար լիազորագիր ներկայացված չէ:

գ/<Մ-Բի-Ռ> ՍՊԸ-ի հայտը ներկայացված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով ներկայացված հայտերի գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ Կասեցնել **ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-17/2** ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման գործընթացը, ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել պաշտոնական հարցում՝ <Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ-ի և <Տուրբոլայն> ՍՊԸ-ի ներկայացրած հայտերի գնահատման վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ն.Ղազարյան

անդամներ՝ _____ Ա.Մարտիրոսյան

_____ Ռ. Ֆռանգուլյան

_____ Մ. Ղազանչյան

_____ Ն.Մանուկյան

քարտուղար՝ _____ Ս.Պետրոսյան